

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

613.96


---

n- -12

השקט

613.96

א-19



השקט

השקט

השקט

78 30 JUL 2010

ՀՐԱՏԱՐՈՎ. Հ. Լ. Կ. ՅԵ. Մ. ԿԵՆՏՐՈՆ  
ՄԻՆ ԿԻՑ ՊԱՏԱՆԻ ՊԻՈՆԵՐՆԵՐԻ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲՅՈՒՐՈՅԻ

613.96 պ.  
Ռ-12

Ռ Ա Դ Ի Ն

Պ Ի Ո Ն Ե Ր,  
Պ Ա Հ Պ Ա Ն Ի Ր  
Ա Ռ Ո Ղ Ջ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Դ

1008  
36617

Խմբագրությանը Հ.Ս.Խ.Հ. Առժողկոմատի  
Սան-Լուս-յեներալին

Յ Ե Ր Ե Վ Ա Ն 1 9 2 5 Թ.

## Հ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ռազինի գրքույկը ցույց է տալիս այն ուղին, վորով ընթանալու յե պիտներնեբի խնամատարը: Գրքույկի մեջ կան խորհուրդներ պիտների նխատուկացի մասին, աշխատանքի և հանգստյան մասին: Խմբագրությունս, ինկատի ունենալով, վոր Հայաստանում տարածված է մալարիան, գրքույկի վերջում ավելացրել է մի փոքրիկ գլուխ մալարիայի մասին: Յուրաքանչյուր պիտներ պետք է իմանա՝ ինչ բան է մալարիան, ինչպես պետք է պաշտպանվել նրանից և ինչպես պետք է կռիվ մղել նրա դեմ, վոր հեռու մնա մալարիայի հասցրած չարիքներից:

ՊԻՈՆԵՐ, ՊԱՀՊԱՆԻՐ ԱՌՈՂ-  
ՋՈՒԹՅՈՒՆԻ.

Խնչպես ե պահպանում խորհրդ. իշխանութիւնը մանուկների յեզ դեռատիների առողջութիւնը. — Խոհարարը ճաշ ե պատրաստում, կոշկակարը կոշիկ ե կարում, իսկ հացթուխը հաց ե թրխում: Առողջութիւնը պահպանել կարող ե միայն բժիշկն և ուրիշ վոչվոք, հենց այնպես, ինչպես այգեպանը հոգ ե տանում ծառի մասին: Վորքան վոր պստիկ ե ծառն, այնքան ել շատ խնամք ե պահանջում: Այ հենց դրա համար ել այդ գործը հանձնված ե առժողկոմատին, մանուկների և դեռատիների առողջության պահպանման բաժնին: Գովառներում մանուկների և դեռատիների առողջության պահպանման համար կան հատուկ բժիշկներ, իսկ գյուղերում այդ

գործը տանում են շրջանային բժիշկները, վորոնք և պարտավոր են պարապել այդ գործով:

Ի՞նչ բան է յերեխաների առողջության պահպանումը. — Բժիշկը համարյա թե այդպեպան է. նա պետք է սովորեցնի թե ուսուցչին և թե յերեխաներին՝ ինչպես պետք է ապրել, վոր միշտ առողջ լինել և չվարակվել տարափոխիկ կամ վարակիչ կոչվող հիվանդություններով, որիննակ՝ քուժեշով, կարմրուկով, դիֆտերիտով և այլն...

Ինչի՞ համար է մեզ առողջությունը. — Նախ և առաջ առողջությունը նրա համար է, վոր մարդ աշխատունակ լինի: Հիվանդը դուրս է ընկնում աշխատանքի բանակի շարքերից, յերբեմն հաշմանդամ է դառնում. որիննակ՝ յեթե մեկի վտակը կտարվելուց հետո լավ չկաչի, նա ամբողջ կյանքի ընթացքում պետք է խեղանդամ մնա: Պալարախտով (թոքախտով) վարակվածը թուլանում է, նիհարում, իսկ յերբ պալարախտը սուր

կերպարանք է ստանում, հիվանդը կարող է մեռնել. և այս բոլոր հիվանդությունները շատ հեշտությամբ կարելի յե կանխել, յեթե իր ժամանակին միջոցներ գործ դնեն:

Ինչպես մենք ինքներս գործում ենք մեզ զերեզման. — Յեթե չկարգանք ապրելու ձևի մասին գրված գրքեր, վոր առողջ մնանք, յեթե չլսենք բժշկի տված խորհուրդները, յեթե չկատարենք պիտների առողջապահական որենքներն, այն ժամանակ շատ հեշտությամբ կարելի յե տկարանալ:

Մեծերի համար կա յերեք «ութնյակ»:

Մարդը կենդանի մեքենա յե, վորը կարող է աշխատել և աշխատում է միայն մի վորոշ ժամանակ:

Այդ աշխատանքը կազմում է նրա բանվորական օրը, վորից հետո հանգիստն է, վերջումը՝ քունը:

Բանվորական բոլոր կուսակցությունների ծրագրով հասակավոր բանվորի համար նշանակված է յերեք ութնյակ՝

8 ժամ աշխատանք, 8 ժամ հանգիստ,  
8 ժամ քուն:

Դեռատու համար 4 6 ժամ աշխատանք.—Յերեխան և դեռատին հասակավորից թույլ են, ուստի Խորհրդային Հանրապետութեան մեջ մինչև 16 տարի հասակ ունեցողներին թույլատրվում է աշխատել գործարանում 4 ժամ, 16—18 տարեկաններին—6 ժամ:

Դպրոցը չպետք է չափից դուրս ծանրաբեռնի յերեխային նրա ուժերից վեր յեվ յերկար ժամանակ պահանջող աշխատանքով:—Հետևապես պարզ է, վոր մանուկ պիտները չպետք է չափից դուրս հոգնեցնի իրեն աշխատանքով: Դպրոցական պարապմունքները և պիտների աշխատանքը պիտի դասավորել վորոշ ժամերին. 8-ից մինչև 10 տարեկան հասակն ընդհանուր առմամբ օրական 4 ժամ կարելի յե պարապել դպրոցական, ակումբի և պիտներական աշխատանքով, 11 տարեկան հասակում  $5\frac{1}{2}$  ժամ, 12 տարեկան հասակում 6 ժամ և այդ-

պես աստիճանաբար կարելի է ավելացնել մինչև 16 տարեկան հասակը, յերբ կարելի յե պարապել  $7\frac{1}{2}$  ժամ:

Ի՞նչ կարող է պատահել, յեթե մեկը ծանրաբեռնի իրեն ուժերից վեր աշխատանքով.—Յեթե 8-ից—12 տարեկան յերեխան աշխատի հասակավոր մարդու պես մոտավորապես 8 ժամ, նա կքայքայի իր առողջութունը. որինակ՝ նա կարող է ստանալ թոքախտ: Բայց մինչ այդ, հոգնածութունն արդեն ցույց կտա իր ահավոր նշանները՝ գլխացավ, անքնութիւն, անհանգիստ քուն, գլխի պտույտ, ախորժակի բացակայութիւն, ներվախտութիւն (ներվայնութիւն): Հոգնած պիտները նկատում է, վոր միևնույն աշխատանքը գլուխ բերելու համար նա 2 անգամ ավելի շատ ժամանակ է կորցնում. կնշանակի նրա ուղեղը հոգնել է, և առաջիկա պես հաջող նա չի կարող աշխատել: Այնուհետև վրա յե հասնում ընդհանուր կազմվածքի ուժասպառութիւնը, վորի հետևանքն է լինում պալարախտը:

Պիճոնները պետք է հետևի իր առողջությանը:

Առաջին հիմնական որոնքն է՝ յեղիր առողջ, այն ժամանակ չես դառնա բեռ աշխատավորական հանրապետության համար և 16 տարեկան հասակում չես ընկնի հաշմանդամների, թորախտավորների շարքը:

Ով հետևում է իր առողջությանը, պարտավոր է կանոնավոր կերպով դասավորել իր աշխատանքի, հանգստի և քնի ժամերը:

Պետք է աշխատել տարիքին համեմատ և պետք է հանգստանալ այնպես, վոր հանգստությունից վորքան կարելի յե շատ առողջ զգալ իրեն. պետք է քնել տարիքին համեմատ և ժամանակին պառկել քնելու:

Ի՞նչ բան է առողջարար հանգիստը.— Այդ ի՞նչ հանգիստ է, վոր առողջարար է:—Պարզ է, վոր դա բացողյա հանգիստն է, թեթև գվարճությունների հանգիստն է—ամառը զբոսնել, բույսեր

ժողովել, միջատներ հավաքել, թավալ տալ թարմ կանաչի վրա, կամ ավելի լավ է չոր խոտի վրա, կարգալ թեթև գրվածքներ, խաղալ, լող տալ. ձմեռը ձնից զառիվայր սարքել և սահնակով վրայից սահել, յերբեմն և վոտասահնակներով կամ քոշերով (չմուշկներով) պաղի տալ, բայց պետք է շուտ-շուտ հանգստանալ: Պետք է հանգստանալ յերեխայի պես և հիշել, վոր յերբ կոմյերիտ կդառնաս, այն ժամանակ հեշտ կլինի լուծել բոլոր դժվար խնդիրները:

Հանգստյան ժամերը պետք է բաց ողում անցկացնել նրա համար, վոր սենյակի ողբ խեղդված է և կեղտաված: Մարդիկ փակ սենյակների ողբ կեղտոտում են և այդ տեսակ ողբ վտասակար է առողջության համար:

Կռիվ մղիլ յերեք լողունգի համար.— սովորել բացողյա, խաղալ բացողյա և քնել բացողյա:

Ի՞նչպես պետք է քնել.— Մեզնից շա-

տերը չգլխտեն ինչպես պետք է քնել. մենք քնում ենք լուսամուտները փակ: Ամբողջ ամառը, գարնանը և աշնանը մինչև ցրտերն ընկնելը պետք է քնել պատուհանները բաց. այն ժամանակ կընտելանաս ցրտին, և ցուրտը չի ազդի քեզ վրա. իսկ ձմեռը պառկելուց առաջ պետք է բաց անել ողանցքը. այդպես սովորելուց հետո միջանցուկ քամին այլևս յերկյուղալի չի լինի, բայց պետք է աստիճանաբար սովորել դրան:

Քանի՞ աստիճան պետք է լինի սենյակի տաքությունը. — չոգ տար, վոր սենյակում տաքությունը լինի միշտ 12-ից—14 աստիճան: Շատ տաքությունից հետո յեթե դուրս վազես, իսկույն կսառչես. իսկ մըսելը հիվանդություն է առաջ բերում, կարելի չէ տկարանալ, որինակ՝ ինֆլուենցիայով:

Լողացի՞ր ամառը, իսկ ձմեռը սառը ջրով շփի՞ր մարմինդ. — Առողջության համար ջուրը մեր առաջին զինակիցն

է և այն ել անփող զինակիցը, հենց այնպես, ինչպես և ողբ:

Ամառը լողացի՞ր ամեն որ և մեծերից սովորի՞ր լող տալը: Պիտները 16 տարեկան հասակում պետք է այնպես իմանա լող տալը, վոր կարողանա փրկել խեղդվողին: Ձմեռը շարունակ շփի՞ր մարմինդ ջրով: Սառը ջուրն ել ողբ պես ամրացնում է մարմինը: Ամեն առավոտ, յերբեմն և յերեկոյան, մոտեցի՞ր ծորակին կամ լվացարանին և շփի՞ր սառը ջրով ամբողջ մարմինդ կամ գոնե մինչև գոտիդ:

Ի՞նչպես պետք է լողանալ. — Լողանալու համար լավ ժամը առավոտյան և յերեկոյան է. ցերեկը, մանավանդ կեսօրին արևահար կարելի չէ լինել, իսկ ուտելուց հետո դյուրին է խեղդվելը, վորովհետև այդ ժամին սիրտը շուտ է հոգնում. ուտելուց հետո լավ է հանդարտ պառկել մեկ ժամ:

Ջուրը մտնելիս շուտ մտի՞ր և իսկույն ևեթ սկսի՞ր լող տալը, թեկուզ

հենց ավի մոտ՝ չպետք է կանգնել, պետք է շարժումներ անել: Սկզբում 5 րոպեյից ավել չմնաս ջրի մեջ. դա յեւ բավական է. հետո կարող ես լողանալ 15 րոպե: Հենց վոր սկսես դողալ, դուրս յեկ ջրից:

Յեթե ջուրը սառն է, և դու սովոր չես սառը ջրին, կարող ես լողանալ, բայց կարճ ժամանակով. յերբեմն ոգտակար է և ջրի մեջ ընկղմվելը, բայց սառը ջրում լողանալուց հետո պետք է անպատճառ վազ տալ կամ արագ քայլել, վորպեսզի տաքանալ: Յեթե տկար ես, լողանալ չի կարելի:

Արեվային վաննաներ. — Առողջ ության յերկու բարեկամներին մենք արդեն գիտենք. դա թարմ ուն է և ջուրը. իսկ մեր յերրորդ բարեկամն է արեգակը: Ով չի տեսել գետնախնձորի ծիւրերը նկուղում, թող դնի մի գույգ գետնախնձոր մի մութ արկղի մեջ և կտեսնի, վոր դրանց ծիւրերը կլինեն թառամած, սպիտակ, յերկար և առանց

տերևների. իսկ ո՞վ չգիտե գետնախընձորը դաշտի միջին:

Այդպես եւ յերեխաներն են առանց արևի: Արեգակը աշխուժացնում է, ուրախացնում, բայց նա ևս մի ոգուտ է տալիս մեզ:

Յեթե արևի տակ պառկես, կխանձվես և կառողջանաս. բայց պետք է գիտենալ՝ ինչպես ոգտվել արեգակից. յեթե դու առողջ ես, կարող ես համարձակ գնալ արևի տակ և նա քեզ ոգուտ կտա. իսկ յեթե դու արդեն հոգնած ես ու տկար, պետք է առաջ գնաս բժշկի մոտ և հարցնես, կարելի յե արդյոք քեզ պառկել արևի տակին: Ամառը լողանալուց առաջ պառկիր ավազի վրա, արևակեզ դառ, հագիր կարճ վարտիկ և վոտաբոբիկ ման արի. յեթե աղջիկ ես, նույնպես ման արի վոտաբոբիկ, կարճ դեյրով և անթև վերնագգեստով, արևի տակին իսկույն արևակեզ կլինես:

Վարակիչ հիվանդություններով յերեխաներն ինչո՞ւ յեն տկարանում. — Յերե-

խաների վարակիչ հիվանդութիւնները շատ հաճախ անցնում են հիվանդից ուրիշ յերեխայի, նրա հարեանին: Այդպէս են անցնում քութեշը, բկուռուցը, կարմրուկը, ծաղիկը... Առաջ հավատում էին, վոր վարակիչ ցավը, սորափոխիկ հիվանդութիւններն անցնում են քամու միջոցով, դրա համար ել այդ հիվանդութիւնները «քամի» էին կոչվում:

Նիկալայ թագավորի ժամանակ խավարամիտ մարդիկ հավատում էին, վոր բժիշկները խուրա յեն բերում: Խուրայի առիթով խրատումներ էին ծագում, վորի համար շատերին Սախալին քշեցին: Իսկ այժմ բոլորն ել գիտեն, վոր վարակիչ հիվանդութիւններն առաջ են գալիս շատ փոքրիկ մարմնիկներից, վորոնք հասարակ աչքով անտեսանելի յեն և կոչվուս են բակտերիաներ կամ մանրէներ: Դրանց կարելի յետեսնել շատ մեծացնող ապակիներ ունեցող գործիքով, վորը մանրադիտակ ե

1008  
36617

կոչվում: Ահա թե վորքան փոքր են մանրէները:

Ինչո՞ւ յեն դրանք վտանգավոր: — Դրանք սպառնալի յեն իրանց անհաշիվ և արագ աճումով: Յեթե նրանց աճման համար բարեհաջող պայման ստեղծենք, այն ժամանակ 24 ժամից հետո մեկ մանրէից կստացվի մի ամբողջ բաժակ, իսկ 36 ժամից հետո՝ 40 դուլլանոց մի տակառ մանրէներ:

Մանրէները մտնում են մարդու կազմըվածքի մեջ զանազան ճանապարհներով, արյան մեջ են մտնում պրոկլաժքի կամ կաշվի ճեղքվածքի միջոցով, թոքերի մեջ մտնում են շնչելիս, չաղիքների մեջ ընկնում են կեղտոտված կերակրի հետ: Մարդու մարմնի մեջ ընկած մանրէները արագ բազմանում և թունավորում են մարդուն իրենց թույներով, այդպէս ե առաջ գալիս հիվանդութիւնը:

Տկարութիւնը մեծ մասամբ սկսվում ե տաքութիւնով, կան դեպքեր,

յերբ բուկն ե ցավում (քութեշ, բկու-  
ուուց), կան դեպքեր, յերբ հարբուխ  
ու հազ ե լինում (կարմրուկ): Հա-  
ճախ մարմինը դուրս ե տալիս (կար-  
մըրուկ, քութեշ, ջրծաղիկ, բնական  
ծաղիկ, կարմրատակ, և այլն):

Միայն բժիշկը պետք ե վորոշի հի-  
վանդությունը. վորքան կարելի յե շուտ  
դիմիր նրան. դրանից ե կախված քո  
շուտ առողջանալը, ձեր ընտանիքի  
մյուս անդամների տկարության առաջն  
առնելը և պիտներ-խմբակի մեջ վա-  
րակի տարածման առաջն առնելը:

Ինչպես պետք ե պանայանել թե իրեն  
յեվ թե պիտներ-խմբակը վարակուածից.—  
Մանուկները պետք ե իմանան՝ ինչ  
բան են վարակիչ հիվանդությունները,  
և ունենան լավ դիտող աչք, վոր կա-  
րողանան ժամանակին իմանալ, թե ըն-  
կերներից ով ե հիվանդ:

Մանկական առողջապահական հանձ-  
նաժողովը.— Բայց դա քիչ ե. պետք ե  
լինի մանկական մի կազմակերպու-

թյուն, վոր ժամանակին նկատի հի-  
վանդությունը և խմբակից հեռացնի  
հիվանդին:

Վորպեսզի խմբակը կամ խմբի մի  
ողակը ճշտությամբ կատարի առողջու-  
թյան վերաբերյալ կանոնները, վոր-  
պեսզի նա կարողանա լավ հետևել յերե-  
խաների մեջ յերևացած հիվանդու-  
թյուններին, վորոնք կարող են ուրիշ-  
ներէ համար վարակիչ լինել, անհրա-  
ժեշտ ե կազմակերպել մանկական ա-  
ռողջապահական մի հանձնաժողով կամ  
կոմիտիս. այդ հանձնաժողովի ղեկավա-  
րը բժիշկն ե լինում, նրա ոգնականը՝  
ուսուցիչը, իսկ յերեխաները՝ կատարա-  
ծուները. նրանք կկիրառեն այդ կանոն-  
ները մանկական ամբողջ հիմնարկու-  
թյան կյանքի մեջ և առաջին հերթին  
իրենց խմբակի կյանքի մեջ:

Ինչով պետք ե զբաղվի մանկաուկոմը  
(այսինքն մանկական առողջապահական  
կոմիտիս).— Հերթապահների միջոցով  
մանկաուկոմը պարզում ե՝ առողջ են ար-

դյոք բոլորը. հիվանդներին ուղղում է բժշկի մոտ, մանկական բուժարան կամ հիվանդանոց: Մանկառկումը նշանակում է ողբի հերթապահներ, վորոնք հետևում են խմբակի ողբի մաքրությանը և թարմացնում են ողբը, բաց անելով պատուհանները դասամիջոցին, աշխատում են համոզել ուսուցչին այս կամ այն դասն անցնել բացողայ դաշտի մեջ: Մանկառկումը նշանակում է հերթապահներ անձնական մաքրության համար. դրանք հետևում են 1) խմբակի պիոներները կատարում են արդյոք առաջին կանոնը՝ ամեն որ լվանալ յերեսը, պարանոցն ու ձեռքերը սապոնով. 2) քսում են արդյոք սառը ջուր մինչև գոտին, լողանում են ամառը. 3) մաքրում են նրանց հագուստն ու սպիտակեղենը. 4) գնում են բաղնիք. 5) խուզել տալիս են արդյոք մազերը. 6) չունեն վոշիլ, առանձնապես շորի վոշիլ, վորը փոխանցում է մեկից մյուսին բծավոր և անդրադարձ տիֆը. 7) չկա՞ արդյոք մեկն

ու մեկի վրա գոնջ կամ վորքին. 8) մաքրում են արդյոք ատամները:

Մանկառկումը նշանակում է հերթապահներ շենքի մաքրության համար. դրանք պետք է կռիվ մղեն փոշու դեմ, հատակին թքելու դեմ, աղբի դեմ. պետք է հետևեն խոհանոցի և արտաքնոցների մաքրությանը: Յերեխաները սովորեցնում են տեխնիկական կազմին փոշին ժողովել վոշ թե փոշին ողբ բարձրացնող խոզանակներով այլ փայտին անցկացրած թաց ջնջոցով (դա թե եժան է և թե առողջապահական)

Արևի ճառագայթների տակ սենյակի մեջ աչքով հաղիվ նշմարելի փոշուկը բակտերիաների համար լավ նավեր են, վորոնց նավաստիները մանրեններն են: Այս մանրենները փոշու հետ միասին շնչում ենք ու լցնում մեր թոքերը, վորտեղից նրանք անցնում են արյան մեջ:

Այդպես են վարակվում քուլթեշով, բկուռուցով, ինֆլուենցով, կասուլյոս

հազով պալարախտով, և մի շարք այլ հիվանդություններով Մանկառւոյնը վերջապես նշանակում է հերթապահներ առաջին ոգնություն հասցնելու համար:

Բայց այստեղ հերթապահները նախքան աշխատանքի դիմելը պետք է ցույց տան իրենց ընկերների վրա առաջին ոգնության յեղանակը: Այդ հետաքրքրական է (ինչպես խաղ) և վերհիշեցնում է, թե ինչպես ոգնել դժբախտ պատահարի ժամանակ (վոսկրի բեկում, արյունհոսություն). վերջապես մանկառւոյնը նշանակում է հերթապահներ, յերեխաների բժշկական քննության որը, վորպեսզի սովորեն՝ ինչպես են չափում հասակը, կշիռը: Այս տեղեկությունները հարկավոր են պիոներին նրա համար, վոր սովորի հակել ինքն իր առողջապահության վրա: Պիոները պետք է ունենա առողջապահական տոմս և պետք է աշխատի, վոր յուրաքանչյուր աշակերտ ունենա այդ տոմսը, վորի

մեջ բժիշկը նշանակում է՝ ինչպես է դարգացել յերեխան, ինչ հիվանդություն է նա ունեցել, յերբ է պատվաստված ծաղիկը, և այլն:

Պետք է ժամանակին ընդունել կերակուր և պետք է ընտրել առողջ ուտելիք: Յերեխայի և հասակավորի կազմը վաճառքի համար ուտելիքը միևնույնն է, ինչ վոր վառելիքը շոգեկառքի համար: Շոգեկառքը չի շարժվի տեղից, յեթե չվառենք նրա վառարանը և շոգի չըստանանք: Միևնույնն էլ մարդն է. նա կարիք ունի ուտելիքի՝ ապրելու և աշխատելու համար:

Այս գիտեն բոլորը, բայց շատ քչերը գիտեն, թե վորքան կարևոր է ընդունել կերակուրը ամեն ուր միևնույն ժամին: Մեր կամքին հակառակ ստամոքսը պատրաստում է մարսողական հյութը մեր ճաշելու սովորական ժամին. յեթե շուտ ճաշես, հյութ չի լինի, իսկ յեթե ուշ ճաշես, արդեն աղիքների մեջ անցկացած կլինի հյութը:

Մի բան ևս չգիտեն մեր յերեխաները. դա այն է, վոր, ըստ նոր ուսմունքի, բանջարեղենը և միրգը շատ կարևոր են սննդի համար և առանց այդ նյութերի կարելի չէ ստանալ լընդախտ. առանց այդ նյութերի չե՞ս աճի ու կարճահասակ կմնաս: Պետք է իմանալ և սովորեցնել տնեցոց վորքան կարելի չէ շատ պաշարել բոնվածքներ, կոտորած կաղամբ, թրմած խնձոր և վարունգ: Թարմ պտուղները, միրգը և բանջարեղենը պարունակում են իրենց մեջ շատ նյութեր (վիտամիններ), վորոնք անհրաժեշտ են առողջության համար, ուստի ավելի լավ է գործածել հում ձևով, միայն մաքուր ջրով պետք է լավ լվանալ, վոր մանրեներ չլինեն նրանց վրա:

Մանկառկոմի պարտքն է հսկել հացի, ամանեղենի և այլոց վրա:

Յեթե պիոններ-խմբակը գտնվում է մանկատան մեջ, մանկառկոմը պետք է հերթապահներ նշանակի հսկելու կե-

րակրի պահպանման, բաժանման և պատրաստելու վրա, պետք է հսկեն հերթապահները և սպիտակեղենի պահպանման վրա: Անհրաժեշտ է, վոր ամեն մեկն ունենա իր առանձին պնակը կամ ափսեն, իր գավաթը (բաժակը), գդալն ու պատառաքաղը: Յեթե միքանի հոգի ուտեն մի ամանից, բոլորն ել կհիվանդանան, յերբ նրանցից մեկն ու մեկը սկա՛ր է աղիքների մի վորևէ հիվանդությունով (արյունլուծ—թանջ, վորովայնի տիֆ, խոլերա): Նույնպես կհիվանդանան բոլորն ել, յեթե ուտեն մի գդալով, պատառաքաղով:

Յեթե ստիպված են խմել ընդհանուր գավաթից, պետք է լավ վողողել գավաթը ջրով ու կողերը լավ մաքրել:

Ուտելու կանոնները. —

Պետք է ուտել առանց շտապելու և խոսելու ու լավ ծամել կերակուրը: Ուտելիքի սննդարարությունը շատ է բարձրանում ատամներով լավ ծամելուց. առողջապահական հուշատետրի մեջ

ուրիշ կանոններ ել կան գրված. այսինքն՝ «Չուտել վոչ շատ տաք, վոչ ել սառը (մանավանդ մեկը մյուսից հետո). չափից դուրս չուտել, չուտել մնացած, հին և փչացած կերակուր. չխմել պղտոր, վատ հոտ և համ ունեցող ջուր (մինչև անգամ շատ ծարավ ժամանակն ել, որինակ՝ զբոսանքի և եքսկուրսիայի ժամանակ). միրգ կամ պտուղը պետք է ուտելուց առաջ լավ լվանալ (մանավանդ փողոցում գնվածը), խակ պտուղ կամ միրգ չուտել, կորիզը կուլ չտալ»:

Ճաշից հետո պետք է մի փոքր հանգիստ թողնել ստամոքսը, ուստի և ճաշից անմիջապես հետո չի կարելի վազել, մարզանքներ անել. ավելի լավ է հանգըստանալ, պառկել մաքուր ողում մեկ կամ յերկու ժամ, լավ է մինչև անգամ մի փոքր քնել:

Ստամոքսը կերակրով չափից դուրս լցնելը վնաս է:

Պետք է ուտել չափավոր, միանգամից անչափ չուտել. քնից առաջ ստա-

մաքսը պետք է դատարկ լինի, ուստի պետք է ուտել քնից 2 ժամ առաջ: Կերակրի մեջ գրգռիչ նյութեր չպետք է լինեն, որինակ՝ պղպեղ, մանանեխ, քացախ. ուժեղ սուրճ և թեյ չպետք է խմել և այլն. Սյգ նյութերը գլրգուում են ներվային համակարգությունը և պիոներին դյուրագրգիւ դարձնում:

Վոգելից խմիչքները վնաս են. — Պիոների ամենավոխերիմ թշնամին գինին և գարեջուրն է. այս հարցում պիոները պետք է որինակելի լինի ուրիշ յերեխաների համար և ամեն տեղ պետք է տարածել լայն կերպով այն միտքը, վոր արբեցողությունը վնասում է առողջությանը, կիսախելագար է դարձնում մարդուն, վորն իրեն հաշիվ չի տալիս իր վարմունքի մեջ: Արբեցողությունը հակահեղափոխության յեղբայրն է:

Պիոները միշտ ել պետք է պատրաստ լինի կռիվ մղելու արբեցողու-

թյան դեմ: Պիոնները չպետք է ծխի:

Ծխելու փաստակարության մասին հարկ չկա մանրամասն խոսելու. ծխախոտն իր մեջ պարունակում է շատ ուժեղ թույն՝ նիկոտին, վորը փաստում է սիրտը, թոքերը և աստիճանաբար քայքայում է նրանց: Ծխամոլներն ավելի շատ են հիվանդանում պալարախտով: Ծխամոլն ուրիշներին ել է փաստում, ստիպում է նրանց շնչել ծխով լցված ոդ: Այն պիոնները, վորն առաջարկություն ետարել ծխելը դադարեցնելու մասին, պետք է հեռանա հասակավորների ժողովից, յերբ ծխելը շարունակում են:

Փիզիկական վարժությունները զարգացնում են, քայց պետք է լինեն չափավոր.— Մարզանքն ուղղում և ամրացնում է յերեխաներին. նա ողակում է միմյանց հետ նրանց, նա ուրախ տրամադրություն է ստեղծում: Պետք է պարապել ֆիզիկական մարզանքներով, բայց պետք է զիտենալ, վոր նա ևս ծանրաբեռնում է:

Մանկան կազմվածքը մի շատ նուրբ մեքենա յե. պետք է զիտենալ նրա հետ վարվելը, հակառակ դեպքում կարելի յե կոտրել, իսկ հետո դժվար կլինի ուղղելը:

Ֆիզվարժությունները ճար են վտիտության դեմ, ոգտակար են, յերբ չափավոր են գործ դնում, և փաստակար, յերբ ի չարն են գործ դնում: Ապա ուրեմն սկսենք ի չար գործ դնելուց, վորպետզի նախազգուշացնենք պիոններին:

Ճուտը լի վնասը.— Սպորտի ամենատարածված ձևերից մեկը ֆուտբոլն է: Մինչև 16 տարեկան հասակը նրանով պարապելը պիոնների համար փասս է, ուստի և զգուշացնում ենք:

Ֆուտբոլը մի այնպիսի վարժություն է, վորով կարելի յե պարապել վոսկրների լիակատար վոսկրացումից հետո, հակառակ պարագային վոսկրը շատ հեշտությամբ կկոտրվի:

Ֆուտբոլը մի այնպիսի վարժու-

թյունն է, վոր լարում է սիրտը և շատ հեշտությամբ ստիպում է հափշտակվել խաղով. իսկ պիոնների պատիկ սիրտը թույլ է, պիոններն անկարող է մեկին սովորել կառավարել ինքն իր կամքը և, տարվելով խաղով, կես ժամի փոխարեն կխաղա 3 ժամ, վորը շատ վնաս է սրտի համար, վորովհետև դա հոգնեցնում է միտքը և առաջ բերում տկարություն:

Դեռատու կազմվածքը հասունանում է միայն 17 տարիքում, յերբ և կարող է խաղալ ֆուտբոլ. ֆիզիկուստերայի բարձր խորհուրդն ևս արգելել է ֆուտբոլ խաղալ 17-ից վաղ:

Ձեռքի գնդակի յեվ բասկետ-բոլի ոգուտը.— Կնշանակի, յեթե պիոնները չի ուզում վնասել իր առողջությունը և զարգացումը, նա չպետք է ֆուտբոլ խաղա: Միայն վոտները զարգացնող ֆուտբոլի փոխարեն կարելի յե առաջարկել 15 տարեկաններին ձեռքի գնդակ և բասկետբոլ, նույնպես և լատենտեննիս, բայց այս

խաղերը բոլորն էլ ծանրաբեռնում են և կարող են խաղալ միայն առողջները:

Փրանսիական ըմբշամարտությունը չպետք է թույլ տալ.— Պիոնները չպետք է պարապե և ֆրանսիական ըմբշամարտությունով: Ակներև է, վոր այս տեսակ ֆիզիկական վարժությունը չափազանց ծանր է և ամենևին պետքական չե յերեխաների համար, մինչև անգամ և պատանիների համար:

Մենամարտությամբ չպետք է պարապել նույնիսկ 17 տարեկան հասակում. ֆրանսիական ըմբշամարտությունը կարելի յե թույլ տալ միայն 20-23 տարեկաններին: Ֆրանսիական մենամարտության փոխարեն կարելի յե առաջարկել հեռույալ խաղը. փայտի մեկ ծայրից մեկն է բռնում, իսկ մյուս ծայրից յերկրորդը և աշխատում են մեկը մյուսին դիմադրել:

Պիոնները յերբեմն կանգնում է ձեռքերի վրա, գլուխը դեպի ցածր: Պետք է հասկանալի լինի, վոր այդպիսի

անբնական վարժություններն, ինչպես  
գլխի վրա կանգնելն ե, բոլորովին ան-  
թույլատրելի յեն: Մանկական հասակում  
այդ դրությունը առաջ ե բերում գլխի  
արյունշատություն, վորից ցավում ե  
գլուխը, իսկ յեթե այդ արեսակ վարժու-  
թյունները շուտ-շուտ կրկնվեն, այն  
ժամանակ վոսկրները լավ չեն աճի:

Զուգահեռական փայտերի յեւ տորնիկի  
վնասը յեւ համաչափ վարժությունների  
ոգուտը. — Սուլ անկյուններում գեռ այ-  
ժում ել կան այնպիսի դեկավարներ, վո-  
րոնք թույլ են տալիս 12 տարեկան  
մանուկներին վոչ թե միայն գլխի վրա  
կանգնելն, այլ և պտտվել սպորտական  
բազեական գործիքների վրա (գուգահեռ  
փայտերի և սուրնիկի վրա): Իհարկե,  
այդպիսի ուժեղ լարումն արագա-  
ցնում ե վոսկրացումը. և հետևանքը  
լինում ե այն, վոր վոսկրների աճումը  
կանգ ե առնում, յերեխան կարճահա-  
սակ ե դառնում, այնպես վոր 16 տա-  
րեկան պիոները 10 տարեկանի հասակ

ե ունենում. այդպիսով մենք կբազ-  
մացնենք հիվանդոտ սիրտ ունեցող  
թղուկների թիվը:

Վոչ թե պիոներն ե հարկավոր ֆիզ-  
վարժությունների համար, այլ ֆիզվար-  
ժություններն են հարկավոր պիոների  
համար. — Պետք ե կատարել այնպիսի  
վարժություններ, վորոնք առողջարար  
են, համապատասխան են հասակին և  
կանոնավոր չափով են. պետք ե պա-  
րտպել չափավոր, որվա մեջ մեկ ժամից  
վոչ ավել. պետք ե հաճախ հանգստա-  
նալ, պետք ե շարժուն խաղեր սարքել՝  
սեթակ, գերի, դբոսանք (եքսկուրսիա),  
լող տալ, ձյանքոչ, չմուշկ. . .

Բժշկի խորհուրդը. — Կան յերեխաներ,  
վորոնք իժնե տկար են, կամ տկար են  
ուրիշ ծանր հիվանդություններից հետո,  
որինակ՝ քութեղից, վոսկրացավից, ապա  
ուրեմն, նախքան ֆիզվարժություններ  
սկսելը, հարկավոր ե խորհրդակցել  
բժշկի հետ: Կան հիվանդություններ,  
վորոնց դեպքում չի կարելի ֆիզվար-

ժություններ անել, որինակ՝ յերիկամունքի հիվանդության դեպքում:

Առողջապահ. կանոններ Ֆիզվարժություններ կատարելիս. — Ֆիզվարժություններից ամենալավը նրանք են, վորոնք կատարվում են բացողայ: Բայց ձմեռը պիտներական աշխատանքներն և մարմնամարզական ուրիշ վարժությունները կատարվելու յեն փակ շենքի մեջ:

Այդ դեպքում պետք է հսկել շենքի վրա. այս գործի համար իսկ և իսկ պետքական են մանկառկումի կողմից ընտրված ֆիզկուլտուրայի հերթապահները: Պետք է հերթապահները վաղորոք քննեն շինությունը և թաց շորով հեռացնեն փոշին, պետք է ողավորեն շենքը վարժություններից առաջ, պետք է բաց անեն ոդանցքները, պատուհանները:

Պետք է վարժվել ֆիզկուլտուրային յեվ աշխատանքին. — Ապա նայեք՝ գործարանում ինչպես արագ է շարժվում փորձ-

ված բանվորի ձեռքը, և վորքան դժվարությունների յե հանդիպում միևնույն գործի մեջ նորեկը: Ինչո՞ւ յե այդպես: Իհարկե, դա վարժվելուց է: Ֆիզկուլտուրայի մեջ ևս կարևոր է վարժվելը, վորովհետև կազմվածքը կամաց-կամաց է լծվում աշխատանքին ու բեռնավորմանը: Ահա թե ինչու, պիտներ, դու պետք է հսկես, վոր աստիճանաբար լրծվես ֆիզիկական վարժություններին և աշխատանքին:

Մեկեն, առանց նախորոք պատրաստության, յերբեք չկպչես ծանր գործի կամ վարժության. պետք է պատրաստվես և սովորեցնես կազմվածքդ, սկսելով աշխատանքն աստիճանաբար և թեթև գործերից. հակառակ դեպքում սրտի հիվանդություն կստանաս:

Աշխատանքը յեվ ֆիզկուլտուրան. — Յուրաքանչյուր դպրոցի աշխատանքի և հանգստի կարգ ու կանոնը հարկավոր է և գործարուսի մեջ: Այստեղ սովելի, քան դպրոցում, պետք է հետևել

այն խորհրդին՝ չհափշտակվել անչափ ծանրաբեռնումով,  $7^{1/2}$  ժամից ավել չերկարացնել բանվորական ուրը, հաշվելով գործարանի աշխատանքը, պիտներ խմբակի և դպրոցի պարապմունքները: Իսկ յեթե մի վրեկս որ անխուսափելի հարկավոր է  $7^{1/2}$  ժամից ավել պարապել, ապա դա թող լինի բացառություն. իսկ իբր որենք պետք է լինի  $7^{1/2}$  ժամ աշխատանք, հաշվելով և ֆիզկուլտուրան:

Ինկատի ունենալով, վոր գործարանում 4-6 ժամ ֆիզիկական աշխատանք կա, գործարուսը պետք է ընտրի ֆիզիկական թեթե վարժություններ, որինսակ՝ զբոսանք մոտակա տեղերը և այն ել շտաշտա հանգստանալով (ձմեռը ձյանքոշերով) և չծանրաբեռնել առանց այն ել հոգնած կազմվածքը դժվար վարժություններով:

Իլյիչի պատգամը պիտներնեքին. — Պիտները պետք է լինի պատիկ լենինական, իսկ լենինական նա յե, ով հաշվի

յե առնում իր ուժերը առույգ ու առողջ, լրջորէն ու յերկարատև գնում է դեպի նշանակած նպատակը:

30 տարի սրանից առաջ լենինը նըպատակ էր դրել իրեն՝ Ռուսաստանի սոցիալիստական հեղափոխությունը և, ժողովելով բանվոր դասակարգի բոլոր ուժերը, հասավ իր նպատակին: Պատիկ լինինական, խորհրդային պետությանն էս ծառայում. ժողովիր և ամբացրու, բայց և պահպանիր ուժերդ, վոր ապագայում համաշխարհային սոցիալիստական հեղափոխության մարտիկը դառնաս և այնքան ուժ և առողջություն ունենաս, վոր հասնես հաղթանակին:

կնում ե առողջին և անց ե կացնում նրան դողերոցքի մանրեն:

Սկզբում առողջի արյան մեջ այդ մանրենները քիչ են լինում, բայց հետո շատանում են, թունավորում են վարակվածին, և նա յեւ հիվանդանում ե:

Մալարիայի դեմ կռվելու համար հարկավոր ե՝ 1) պիտներ. խմբակի մեջ դողերոցքով հիվանդ չպետք ե լինի. ով հիվանդ ե, պետք ե բժշկվի, վոր շուտ առողջանա և ուրիշների վարակման պատճառ չդառնա:

Վորպեսզի չհիվանդանալ, յուրաքանչյուր առողջ պիտներ պետք ե ընդունի շաքաթը մեկ կամ յերկու անգամ խինին իր ատրիքին համեմատ չափով. դա հարկավոր ե մալարիայից նախագգուշանալու համար:

2) Պիտներական հիմնարկության կից ճահիճներ չպետք ե լինեն. պիտներական հիմնարկության բակի կամ պարտիզի մոջ մինչև անգամ չպետք ե լի-

### ԻՆՉՊԵՍ ԿՌՎԵԼ ՄԱԼԱՐԻԱՅԻ ԴԵՄ

Յուրաքանչյուր պիտներ պետք ե իմանա, վոր Հայաստանում ամենատարածված հիվանդությունը մալարիան ե:

Ի՞նչ բան ե մալարիան:

Մալարիան վարակիչ հիվանդություն ե, առանձնապես տարածված ե ճահճոտ տեղերում: Այդ հիվանդության տարածողը մի տեսակ մոծակ ե, վորը հենց այդպես ել կոչվում ե՝ ճահճային տենդի կամ դողերոցքի մոծակ:

Մալարիան, ճահճային տենդը, նույն դողերոցքն ե և ունի իր մանրեն, ինչպես և մնացած վարակիչ հիվանդությունները: Այդ մանրեն առաջ անցնում ե հիվանդից մոծակին, վորը հետո

նի վոչ մի կանգնած շուր, նույնիսկ և շատ փոքր չափով:

3) Պիոներները պետք է աշխատեն վոչնչացնել և կոտորել բոլոր մոծակներին, վորոնք գտնվում են իրենց հիմնարկության անկյուններում և մութ տեղերում:

4) Հայաստանի տափաստան մասերում բացողյա քնելիս պետք է գործածել ծածկոցներ, վոր քնած ժամանակ մոծակներ չկծեն, կամ պետք է քնել բարձր տեղում, վորտեղ առհասարակ մոծակներ չեն կարող բարձրանալ:

---

ԳԻՆԸ 5 ԿՈՊ.

8

«Ազգային գրադարան»



NL0270246

3361